ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/66-Պ

ք. Երևան «04» նոյեմբերի 2022թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Կարեն Ղազարյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, , մի կողմից, և

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

(երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր),
կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթի անցկացման համար մատուցել Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի (այսուհետ՝ Մարզահամերգային համալիր) տարածքի (համաձայն կից Հավելված 3-ի) տրամադրման, կոմունալ (այդ թվում ջեռուցման, հակահրդեհային անվտանգության, օդափոխության) և տեխնիկական սպասարկման ապահովման՝ այնքանով որքանով առկա է մարզահամերգային համալիրում, ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար՝ սույն պայմանագրի 4.1 կետի համաձայն: Կատարողի կողմից տրամադրվող տեխնիկայի ցանկը կցվում է Պայմանագրի անբաժան մաս հանդիսացող Հավելված 1-ում:

1.2 Ծառայությունները մատուցվում են 04.11.2022թ-ից մինչև 18.12.2022թ.: Ընդ որում, Պատվիրատուն մինչև 18.12.2022թ-ը ժամը 12:00 պարտավորվում է Մարզահամերգային համալիրի ճեմասրահից, ճեմասրահի բոլոր հարթակներից և համերգային դահլիճից իսկ մինչև 22.12.2022թ ժամը 12:00 սպորտային դահլիճից և իր կողմից օգտագործված բոլոր տարածքներից ապամոնտաժելու և տարածքից դուրս բերելու պատրաստված դեկորացիաները և աշխատանքի արդյունքները, այլապես Կատարողը յուրաքանչյուր ժամկետանց ժամի համար իրավունք ունի Պատվիրատուից պահանջելու վճարել տուգանք՝ 20 000 (քսան հազար) ՀՀ դրամի չափով: 04.11.2022թ-ից 18.12.2022թ.-ը ներառյալ Պատվիրատուն միանձնյա ստանձնում է Մարզահամերգային համալիրի ամբողջ տարածքի անվտանգությունը, իսկ 18.12.2022թ-ից սկսած Մարզահամերգային համալիրի տարածքից անվտանգության ապահովումն աստիճանաբար փոխանցվում է Կատարողին մինչև սույն կետով նախատեսված ապամոնտաժման գործողությունների վերջնական ավարտը այն հաշվարկով, որ չապամոնտաժված տարածքների անվտանգությունը մշտապես իրականացվի Պատվիրատուի կողմից:

1.3 Աշխատանքների համար 04.11.2022թ.-18.12.2022թ.-ը ներառյալ Կատարողն ապահովում է տարածքի տրամադրումը: 04.11.2022թ.-ից սկսած Կատարողը պարտավորվում է ապահովել տարածքի տրամադրումը Պատվիրատուի ենթակայությանը՝ բացառելով այլ վարձակալների, երրորդ անձանց և իր աշխատակիցների առկայությունը (վարձակալների և անձանց ցանկը, ովքեր բացառության կարգով կարող են գտնվել տրամադրվող տարածքում սահմանվում է Պայմանագրի անբաժան մաս

հանդիսացող Հավելված 2-ում): Հավելված 2-ում սահմանված անձանց նկատմամբ կիրառելի են Պատվիրատուի կողմից սահմանված մուտքի և ելքի վերահսկողության կանոնները և Կատարողը երաշխավորում է, որ նշված անձիք ենթարկվելու են այդ կանոններին:

1.4. Կողմերն արձանագրում են, որ Պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուն իրավունք ունի առանց Կատարողի հետ նախնական համաձայնեցնելու, ըստ անհրաժեշտության, հրավիրել երրորդ անձանց, այդ թվում նաև, բայց չսահմանափակվելով, Կատարող ընկերության աշխատակից հանդիսացող անձանց: Ընդ որում, Կողմերն արձանագրում են, որ Պայմանագրի արժեքի շրջանակներում և դրա գործողության ողջ ընթացքում Կատարողը պարտավորվում է իր ենթակայության ներքո գտնվող ռեսուրսները (այդ թվում նաև մարդկային ռեսուրսները) տրամադրել Պատվիրատուին՝ ըստ վերջինիս պահանջի:

1.5 Կողմերն արձանագրում են, որ Կատարողը սույն Պայմանագրի շրջանակներում չի տրամադրում Պատվիրատուին, իսկ վերջինս, չի վարձակալում Մարզահամերգային համալիրի նախասրահի աջակողմյան հատվածի հանրային սննդի համար նախատեսված 193.2 քմ մակերեսով տարածքը, որը 03.11.2022թ.-ից տրամադրված է «Հայր և որդի Երեմյաններ» ՍՊ ընկերությանը բացառիկ օգտագործման իրավունքով՝ հանրային սննդի մատուցման ծառայությունների նպատակով: Ընդ որում, Կողմերն արձանագրում են, որ բացի սույն կետով սահմանված տարածքից, «Հայր և որդի Երեմյաններ» ՍՊ ընկերության կողմից Մարզահամերգային համալիրին տարածքի այլ վայրերում սննդի ապահովման ծառայությունների մատուցումը հնարավոր է միայն Պատվիրատուի թույլտվությամբ:

1.6 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթի անցկացման կապակցությամբ կարող են սահմանվել լրացուցիչ պարտավորություններ մրցույթի անցկացման հետ կապված՝ Կատարողը պարտավորվում է առանց լրացուցիչ համաձայնություն տրամադրելու այդ բոլոր պարտավորությունները ստանձնել այն նույն ծավալով, որ ծավալով կսահմանվեն Պատվիրատուի համար, պայմանով, որ դրանք լինեն ողջամիտ, չառաջացնեն լրացուցիչ ֆինանսական ծախսեր Կատարողի համար և վերաբերեն սույն պայմանագրով Կատարողի ստանձնած պարտավորություններին: Լրացուցիչ պարտավորությունների մասին Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին ծանուցել անհապաղ, որոնք ուժի մեջ են մտնում Կատարողի համար դրանց մասին ծանուցվելու պահից, եթե այլ բան չի բխում տվյալ ծանուցումներից:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. *Կատարողը պարտավոր է՝*

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով՝ հաշվի առնելով նաև «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթի անցկացման համար պահանջվող առանձնահատուկ կանոնները, որոնք Կատարողի համար չեն առաջացնի լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ.

2.1.2.Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն Պայմանագրի 1.2 և 1.3 կետերում նշված ժամկետներում.

2.1.3. Տարածքը տրամադրելուց հետո առաջացած ընթացիկ բնույթի վերանորոգումները, որոնք իրենց էությամբ պետք է կատարվեն Կատարողի կողմից, կատարել Պատվիրատուի ցուցումով և տարածքում գործող ռեժիմին համապատասխան, եթե Պատվիրատուն ցանկություն չհայտնի կատարել դրանք սեփական ուժերով.

2.1.4. Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուի ցուցումով տարածքը մաքրել ավելորդ գույքից կամ աղբից: Ընդ որում, մինչև տարածքի տրամադրումը Կատարողը պարտավոր է տարածքը ազատել ցանկացած այնպիսի գույքից, որը կարող է խոչընդոտել տարածքը լիարժեք օգտագործելիս.

2.1.4. Մատուցվող Ծառայությունների վերաբերյալ Պատվիրատուի գրավոր առարկությունները ստանալուց հետո ոչ ուշ քան 3 (երեք) ժամվա ընթացքում վերացնել թերությունները, ինչի մասին գրավոր տեղեկացնել Պատվիրատուին.

2.1.5. Կատարողը երաշխավորում է իր տարածքում նկարահանվող նախագծի գաղտնիությունը և հետևում է Պատվիրատուի կողմից տրվող բոլոր հրահանգներին, այնքանով, որքանով Կատարողը և Հավելված 2-ում նշված անձինք կառնչվեն դրանց սույն պայմանագրի շրջանակներում.

2.1.6 Այնքանով, որքանով Կատարողը և Հավելված 2-ում նշված անձինք կառնչվեն սույն պայմանագրի շրջանակներում, որևէ պարագայում չհրապարակել/չբացահայտել Պատվիրատուի առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը: Սույն կետի իմաստով առևտրային գաղտնիք է համարվում «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթի և այլ միջոցառումների հետ որևէ կերպ առնչվող ցանկացած տեղեկատվություն, ցանկացած փաստաթուղթ կամ ինֆորմացիայի ցանկացած կրիչ, որը Կատարողին /այդ թվում նաև նրա աշխատակիցներին կամ ցանկացած այլ անձի, որը Կատարողի թույլտվությամբ կարող է ստանալ որևէ տեղեկություն Առևտրային գաղտնիքի մասին/ հայտնի է դարձել (որը Կատարողը ձեռք է բերել) Կատարող հանդիսանալու շնորհիվ (այսինքն, Կատարողը չէր կարողանա օրինական ճանապարհով ծանոթանալ այդ տեղեկատվությանը (կամ ձեռք բերել այն), եթե սույն պայմանագրի կողմ չհանդիսանար).

2.1.7. Ձեռնարկել ողջամիտ և բավարար միջոցներ՝ 2.1.6 կետում նշված Առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության պահպանության համար, ապահովել Առևտրային գաղտնիքի պաշտպանվածությունը: Ողջամիտ և բավարար միջոցների ներքո սույն պայմանագրի շրջանակներում հասկացվում են այնպիսի միջոցներ, որոնք բացառում են Առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության՝ երրորդ անձանց համար հասանելի դառնալը.

2.1.8 Չիրականացնել 2.1.6 կետում նշված Առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության պատճենահանում, թարգմանություն հավաքագրում և այլն:

2.1.9. Չհրապարակել/չբացահայտել 2.1.6 կետում նշված Առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվությունը անկախ այն հանգամանքներից, թե երբ և ինչ եղանակով է Կատարողը (այդ թվում նաև նրա աշխատակիցները, ծառայություններ մատուցողները կամ այլ համանման անձինք) տեղյակ դարձել այդ տեղեկատվությանը:

2.2. *Կատարողն իրավունք ունի՝*

2.2.1. Լուծել պայմանագիրը 4.1 կետով նախատեսված վճարումները նույն կետով սահմանված ժամկետում չկատարելու (ուշացնելու) դեպքում.

2.2.2. Պահանջել Պատվիրատուից հատուցել Կատարողի կողմից տրամադրված գույքին (այդ թվում, բայց չսահմանափակվելով՝ սարքերին, սարքավորումներին, շենքերին, շինություններին և այլն) պատճառված վնասը:

2.3. *Պատվիրատուն պարտավոր է՝*

2.3.1. Ծառայությունների դիմաց վճարել սույն Պայմանագրի 4-րդ կետում նշված կարգով, ժամկետներում և գնին համապատասխան.

2.3.2. Որևէ կերպ չխոչընդոտել Կատարողի կողմից Ծառայության մատուցմանն ուղղված օրինաչափ գործողություններին.

2.3.3. Նկարահանումներն իրականացնել Պայմանագրի պայմաններին և Մարզահամերգային համալիրի շենքի գործառնական նշանակությանը համապատասխան.

2.4. *Պատվիրատուն իրավունք ունի՝*

2.4.1. Ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը.

2.4.2. Կատարողի կողմից Ծառայությունները ոչ պատշաճ, կետանցով, ոչ լրիվ ծավալով մատուցելու դեպքում պահանջել վերացնելու թերությունները, թերությունները չվերացնելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը:

2.4.3. Հրաժարվել սույն Պայմանագրի Կատարումից, պայմանավորված «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթը չեղարկելով, չանցկացվելով կամ այլ պատճառներով պայմանավորված: Ընդ որում, մինչև 2022թ.-ի նոյեմբերի 10-ը ներառյալ Պատվիրատուի կողմից Պայմանագրից հրաժարումը ազատում է Պատվիրատուին ցանկացած տույժ և/կամ տուգանքի վճարումից: 2022թ.-ի նոյեմբերի 10-ից հետո Պատվիրատուի կողմից Պայմանագրից հրաժարվելու դեպքում տույժի և/կամ տուգանքի չափը չի կարող գերազանցել 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամը: Եթե պայմանագրի կատարումից հրաժարումը տեղի է ունենում 2022թ դեկտեմբերի 1-ից հետո, ապա Կատարողն իրավունք ունի չվերադարձնելու սույն պայմանագրի 4.1 կետով նախատեսված կանխավճարը:

2.4.5. Ունենալ պատասխանատու անձ Կատարողի մոտ, ով կվերահսկի «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթի անցկացման կապակցությամբ Մարզահամերգային համալիրի տարածքում Կատարողի կողմից կատարվող վերանորոգման աշխատանքները և այդ կապակցությամբ կտա պարտադիր կատարման ենթակա ցուցումներ, ելնելով մրցույթի պատշաճ իրականացման նպատակներից, պայմանով, որ դրանց կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ չեն առաջանա Կատարողի համար:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների ավարտից հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտ և հաշիվ-վավերագիր:

3.2. Հանձնման-ընդունման ակտը Կատարողի կողմից ներկայացնելու օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն Կատարողի աջակցությամբ ստուգում է մատուցված Ծառայությունների որակը և առարկությունների բացակայության դեպքում հաստատում է հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:

3.3. Այն դեպքում, երբ մատուցված Ծառայություններում հայտնաբերվում են թերություններ և/կամ շեղումներ, Պատվիրատուն պարտավորվում է սույն Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Կատարողին գրավոր ներկայացնել հանձնման-ընդունման ակտի չհաստատման հիմնավորում, նշելով հայտնաբերված թերությունները և/կամ շեղումները և սահմանելով դրանց վերացման ողջամիտ ժամկետները:

3.4. Այն դեպքում, եթե Պատվիրատուն սույն Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում չի հաստատում հանձնման-ընդունման ակտը և Կատարողին չի ներկայացնում դրա հիմնավորումը, ապա հանձնման-ընդունման ակտը համարվում է հաստատված Պատվիրատուին ներկայացնելու ամսաթվով:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 65 000 000 (վաթսունհինգ միլիոն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Պատվիրատուն սույն պայմանագրի արժեքի 30%-ը, որը կազմում է 19 500 000 (տասնինը միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես մատուցվող ծառայությունների կանխավճար պարտավորվում է վճարել մինչև 01.12.2022թ.-ը, իսկ պայմանագրային արժեքի մնացած մասը, որը կազմում է 45 500 000 (քառասունհինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ Կատարողի կողմից

հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը ներկայացնելուց և երկկողմանի հաստատվելուց հետո 40 (քառասուն) աշխատանքային օրվա ընթացքում:

4.2 Սույն պայմանագրի 4.1 կետով նախատեսված վճարումները նույն կետով սահմանված ժամկետում չկատարելու (ուշացնելու) դեպքում Պատվիրատուից կարող է գանձվել տուժանք՝ սույն Պայմանագրի գնի 0.1 տոկոսի չափով՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար, բացառությամբ Պայմանագրի 2.4.3. կետով նախատեսված դեպքերի:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՄ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ և ԿԱՐԳԸ

5.1.Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել սույն Պայմանագիրը կատարելուց՝ Կատարողի փաստացի կատարած ծախսերը և սույն Պայմանագրով նախատեսված տուժանքներն ու տուգանքները վճարելու պայմանով՝ հաշվի առնելով Պայմանագրի 2.4.3. կետով նախատեսված առանձնահատուկ կարգավորումները:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կողմերը որևէ պատասխանատվություն չեն կրում մյուս Կողմի՝ սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների իրականացման ընթացքում, Կողմի կողմից թույլ տված երրորդ անձանց իրավունքները խախտող գործողությունների համար:

6.2.Սույն Պայմանագրով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ / թերի կատարելու արդյունքում խախտող Կողմը պատճառված վնասը հատուցում է մյուս Կողմին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.3Վճարները ուշացնելու կամ չիրականացնելու և/կամ որևէ այլ գործողությամբ Կատարողին վնաս պատճառելու դեպքում Պատվիրատուն պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված և սույն Պայմանագրով նախատեսված կարգով և չափով, բացառությամբ Պայմանագրի 2.4.3. կետով նախատեսված դեպքերի:

6.4. Տույժերի և/կամ տուգանքների և/կամ վնասների հատուցումը Կողմերին չի ազատում սույն Պայմանագրով ստանձնած իրենց պարտականությունները կատարելուց:

6.6. Պատվիրատուն պատասխանատվություն է կրում նկարահանումների իրականացման և/կամ կազմակերպման ընթացքում Պատվիրատուի և/կամ մասնակիցների կողմից Կատարողին և/կամ երրորդ անձանց պատճառված բոլոր տեսակի վնասների համար:

6.6. Պատվիրատուի կողմից համապատասխան պահանջ ներկայացվելու պարագայում Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին միանվագ վճարել 5 /հինգ/ միլիոն ՀՀ դրամ սույն պայմանագրի 2.1.8 կետով նախատեսված առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվությունը հրապարակելու/բացահայտելու յուրաքանչյուր դեպքի համար:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

8.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

8.7 Սույն պայմանագիրը կազմված է 14 (տասնչորս) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

8.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	**«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ**
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, 0011, Գ .Հովսեփյանի 26	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1
ՀՎՀՀ՝ 01540062	ՀՎՀՀ՝ 00144572
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ	Բանկ՝ թիվ 1 տարածքային գանձապետական բաժին
Հ/Հ՝ 2050022082671001	Հ/Հ՝ 9000018002825
Գործադիր տնօրեն՝	Տնօրեն
Հ. Մովսիսյան	**Կ. Ղազարյան**
(ստորագրություն/կնիք)	(ստորագրություն/կնիք)

Հավելված 1
04 նոյեմբերի 2022 թվականին կնքված № ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/66-Պ պայմանագրի

Կատարողի կողմից տրամադրվող տեխնիկայի ցանկ.

1. SPORT HALL	2. CONCERT HALL
Meyer sound Milo 12 left 12 Right Out fill 8 Mica L 8Mica R Front fill 6 melody Stage monitor meyer sound USM 1 P (4) UM 1 P (4) MJF 212A Subs HP700 6left 6 right	Adamson S10 12 left 12 right Subs Adamson E119 6 left 6 right. Mixer YAMAHA CL5+2Rio 32/24 YAMAHA M7CL

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, 0011, Գ .Հովսեփյանի 26

ՀՎՀՀ՝ 01540062
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 2050022082671001
Գործադիր տնօրեն՝

---------- **Հ. Մովսիսյան**
(ստորագրություն/կնիք)

ԿԱՏԱՐՈՂ
«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0028,
Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1
ՀՎՀՀ՝ 00144572
Բանկ՝ թիվ 1 տարածքային գանձապետական բաժին
Հ/Հ՝ 900018002825
Տնօրեն՝

---------- **Կ. Ղազարյան**
(ստորագրություն/կնիք)

Հավելված 2
04 նոյեմբերի 2022 թվականին կնքված № ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/66-Պ պայմանագրի

«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի										
N	Պաշտոն	Անուն	Հայրանուն	Ազգանուն	Ծննդյան			Հասցե	Հեռախոսահամար	Ավտոմեքենայի համարանիշ
					օր	ամիս	տարի			
ՎԱՐՉԱԿԱԶՄ										
1	Տնօրեն	Կարեն	Ռաֆայելի	Ղազարյան	25	04	1970	Ք. Երևան, Սայաթ Նովա 4շ. բն. 43	091/229294	166 SS 60 117HH 01
2	Տնօրենի տեղակալ	Էդուարդ	Երեմի	Մանուկյան	10	07	1959	Ք. Երևան,Նոր-Նորք 5զ/ծ շ.17ա 29բն	077/395141	37 NP 974
3	Տնօրենի օգնական	Արմինե	Գագիկի	Գրիգորյան	24	11	1979	Ք. Երևան Վրացյան 84/1 բն.52	055/359859	22 AA 644
4	Տնօրենի օգնական	Ռաֆայել	Կարենի	Ղազարյան	20	10	2005	Ք.Երևան, Վարդանանց 18/1 բն 34	096/229294	
5	Համերգների կազմակերպման պատասխանատու	Մարատ	Հայկի	Ռոստոմյան	22	06	1994	Ք.Երևան Կոմիտաս 63շ.2/27	43/232636	44 MR 404
6	Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի մասնագետ	Լաուրա	Սարգիսի	Վարդանյան	10	09	1990	Ք. Երևան Կոտովսկու 23տ.	093/302061	
7	Իրավաբան	Բագրատ	Արամի	Հարությունյան	22	05	1995	Ք.Երևան Նալբանդյան 102 բն.6	091/062002	01 RQ 020
8	Մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետ	Մարիամ	Վահանի	Հովհաննիսյան	05	12	1976	Ք. Երևան Խաղաղ Դոնի 31 շ. 90 բն.	099/ 363544	

9	Գնումների համակարգող	Նելլի	Հովհաննեսի	Բոյաջյան	10	07	1982	Ք. Երևան Մարգարյան 2նրբ. 2/16	055/805561	
				ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺԻՆ						
10	Գլխավոր հաշվապահ	Լուսինե	Հովհաննեսի	Բոյաջյան	19	12	1976	ք. Երևան 16թաղ. 31/94	099/730263	
11	Գլխավոր հաշվապահի տեղակալ	Լիլիթ	Դավթի	Տանդիլյան	02	10	1988	ք. Երևան Թոթովենց 8/1 18 բն.	091/671678	
	ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ									
12	Տնտեսական բաժնի պետ	Միքայել	Արկադիի	Ղուկասյան	26	07	1970	Ք.Երևան Ե.Թադևոսյան 13/1 15բն	099/375353	53 MG 053
13	Տնտեսական հարցերով մասնագետ	Հարությունն	Հակոբի	Խաչատրյան	02	08	1993	Ք' Երևան Ծերենցի 48	091/321292	
14	Պահեստապետ	Արա	Ազատի	Ղազարյան	26	01	1962	Ք. Երևան Պուշկինի 40շ 1 ա	095/767871	
				ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ						
15	Անվտանգության և տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայության պետ	Էդգար	Դերենիկի	Ղուկասյան	19	03	1983	Ք.Երևան Նոր Արեշ 11փ. 58/1	093/558557	77 II 100
16	Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային տեխնիկայի մասնագետ	Արման	Նորայրի	Գևորգյան	29	06	1988	Նոր-Նորք 7-րդ մասիվ 34շ, 40բն	044/778820	
				ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻՆ						
17	Գլխավոր ճարտարագետ	Ասատուր	Հարությունի	Նալբանդյան	25	02	1959	Ք. Երևան Պուշկինի 62շ 6բն.	091/477051	

18	Տեխնիկական հսկողության ճարտարագետ	Ռուբեն	Վաչագանի	Գրիգորյան	03	12	1970	Ք. Երևան Զ. Քանաքեռցու փ. 70/5	098/207037	
19	Բեմական սարքավորումների մասնագետ	Կարեն	Աբրահամի	Մարգարյան	13	04	1999	Արագածոտն Զովասար 1փ.19տ.	094/167372	
20	Բեմի էլեկտրիկ մեխանիկ	Արկադի	Ռեդիկի	Ներսեսյան	07	07	1959	ք. Երևան Դավիթաշեն 1 թաղ. 23շ, 3բն	099/611375	
21	Ճարտարագետ մեխանիկ	Արթուր	Ասատուրի	Նալբանդյան	07	06	1996	Ք. Երևան Պուշկինի 62շ 6բն.	055/535324 098/888660	
ՀՆՉՅՈՒՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ										
22	Հնչյունային սարքավորումների շահագործման ծառայության պետ	Տիգրան	Կարապետի	Խաչատրյան	09	05	1982	Ք.Երևան Ավան-Առինջ 2/3,բն 24/1	098/221099	
23	Մոնտաժային աշխատանքների պատասխանատու և մոնիտոր ինժեներ	Հրաչյա	Արթուրի	Գասպարյան	10	01	1995	Ք. Երևան Խաղաղ Դոնի 31 շ. 90 բն.	093/ 473731	
ԼՈՒՍԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ										
24	Լուսային սարքավորումների շահագործման ծառայության պետ	Էդգար	Սամվելի	Մուրադյան	30	04	1988	Աբովյան Հանրապետության պ. շ. 15ա, բն.22	093/ 210609	
25	Լուսային սարքավորումների մասնագետ	Սարգիս	Վրեժի	Սայադյան	20	07	1974	ք. Երևան Լևոնյան 47 տուն	096/177151	
ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ										
26	Սպասարկման ծառայության պետ	Ցոլակ	Միքայելի	Սարգսյան	20	08	1956	Ք. Երևան Լենինգրադյան 2, 58բն	094/ 392343	
27	Սպասարկման ծառայության պետի տեղակալ	Արմենակ	Ժորայի	Ծովանյան	25	12	1967	Ք. Երևան Գյուլիքեխվյան 21շ, 16 բն.	077/ 753473	

28	Վարորդ	Հարությունն	Հակոբի	Խաչատրյան						
29	Այգեպան/ բանվոր	Տիգրան	Արսենի	Հովհաննիսյան	14	10	1955	Ք. Երևան Օտյան 6	091/743132	
30	Այգեպան	Վահրամ	Սերյոժայի	Դավթյան	02	02	1958	ք. Երևան Մ. Մելիքյան 38 տ.	077/783562	
31	Այգեպան	Խաչատուր	Հովհաննեսի	Մսրյան	08	11	1956	Ք. Երևան Վաղարշյան փող. 19շ. 14 բն.	093/ 397322	
32	Կանաչապատման ոլորտի բանվորուհի	Մանուշակ	Յուրիի	Մակունց	10	11	1975	Ք.Երևան Զորավար Անդրանիկի 133-46	094/001085	
33	Բանվոր	Դավիթ	Արամի	Դևրիկյան	16	5	1970	Ք.Երևան Ահարոնյան 8-17	091/575659	
34	Բանվոր	Վահագն	Արմոյի	Հայրապետյան	16	01	1975	Ք. Երևան Ուլնեցու4 փակ. 5շ. բն.23	098/ 046938	
35	Բանվոր									
36	Բանվոր	Արմենակ	Բախշիի	Պետրոսյան	02	07	1957	Ք.Երևան Մ. Մելիքյան փող. տուն 28	099/312100	
37	կառույցների ու սարքավորումների սպասարկման բանոր									
38	Սանհանգույցի հավաքարար	Ռոզա	Սուրիկի	Դանիելյան	03	04	1969	Ք. Ֆուչիկի 2նրբ. 5 շ. 43 բն.	094/ 237108	
39	Սանհանգույցի հավաքարար	Անահիտ	Սերյոժայի	Ասատրյան	22	02	1970	Ք. Երևան Դավթաշեն 1թաղ. 42-33	077/ 323748	
40	սանհանգույցի հավաքարար	Վեներա	Օնիկի	Հարությունյան	01	08	1963	Էջմիածնի շրջ. Գյ. Արևշատ	093495135	
41	սանհանգույցի հավաքարար	Զինա	Կառլենի	Ղարիբյան	16	04	1954	ք. Երևան Վրացյան փ. 1 շ.8 բն.	098/ 160454 010/553054	

42	Հավաքարար	Սուսաննա	Համբարձումի	Մանուկյան	04	07	1957	Ք. Երևան Հալաբյան 27շ. 35 բն.	093,091/841813	
43	Հավաքարար	Թերեզա	Գրիշայի	Բարիկյան	10	05	1959	Արմավիրի մ/զ գյ.Մրգաստան 7փ. 20տ.	098810552	
44	Հավաքարար	Ալվարդ	Խաչատուրի	Մարգարյան	01	07	1957	Կոտայքի մ/զ գյ.Առինջ Ջագավանքի 1 նրբ. 1 տ	093/182397	
45	Հավաքարար	Անժելա	Սերգեյի	Տոնյան	21	05	1959	Ք.Երևան Դավիթաշեն 2թաղ. 24-34	094569700	
ՀՐՇԵՋ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ										
46	Հրշեջ ծառայության պետ	Արա	Զավենի	Գրիգորյան	04	07	1968	ք.Երևան Կ.Ուլնեցու 2փակ. 4շ. 30 բն.	091/703129, 010/280536	
47	Հրշեջ մասնագետ	Արսեն	Սարիբեկի	Ասատրյան	28	12	1969	Ք. Երևան Մանանդյան 3շ,27բն.	099/365888	
ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍ										
48	Մեխանիկական արտադրամասի պետ	Ալբերտ	Ժորայի	Սահակյան	01	04	1956	Ք. Երևան Սայաթ-Նովա 4 շ. 24 բն.	094/ 505443	
49	Սանտեխնիկ	Վահան	Մարտիկի	Գրիգորյան	28	07	1966	Ք.Երևան Սեբաստիա 30շ, բն. 45	093/ 720330	
50	Սանտեխնիկ	Գրիգոր	Վարդանի	Գրիգորյան	27	08	1982	Ք. Երևան Մեծարենցի 20	098/693952	
51	փականագործ/ սանտեխնիկ	Գագիկ	Սերյոժայի	Վերանյան	10	07	1957	Ք.Երևան Ե.Թադևոսյան13/1 20բն.	099/48-24-60	
52	Փականագործ	Վանյա	Խաչատուրի	Դեմուրչյան	18	07	1957	Ք. Երևան Բաբաջանյան 38շ. 15բն.	091/ 180757	

ՕԴԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՋԵՌՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ										
53	Օդակարգավորման և ջեռուցման ծառայության պետ	Սենիկ	Խաչիկի	Գրիգորյան	02	04	1958	Ք Երևան Մելիքյան փող. 27 տուն	091/508391	
54	Հնոցապան	Աշոտ	Բորիսի	Փոլադյան	05	01	1964	Ք.Երևան Մ. Մելիքյան 26 տ.	093/287385	
ԷՆԵՐԳՈՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ										
55	Գլխավոր Էներգետիկ	Գեղամ	Հոգսենի	Սարգսյան	26	03	1958	ք.Երևան Շինարարներ 35,բն38	093/939531	
56	Էլեկտրամեխանիկ/ էլեկտրամանտյոր	Սամվել	Հարութի	Գասպարյան	16	6	1955	Ք. Երևան Ա. Վշտունու 2նրբ. 19տ.	098/399358	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, 0011, Գ .Հովսեփյանի 26

ՀՎՀՀ՝ 01540062
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 2050022082671001
Գործադիր տնօրեն՝

Հ. Մովսիսյան
(ստորագրություն/կնիք)

ԿԱՏԱՐՈՂ
«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0028,
Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1
ՀՎՀՀ՝ 00144572
Բանկ՝ թիվ 1 տարածքային գանձապետական բաժին
Հ/Հ՝ 900018002825
Տնօրեն՝

Կ. Ղազարյան
(ստորագրություն/կնիք)

Հավելված 3
04 նոյեմբերի 2022 թվականին կնքված № ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/66-Պ պայմանագրի

«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի տարածքում Պատվիրատուին տրամադրվող տարածքների ցանկ.

Սպորտային դահլիճ
Համերգային դահլիճ
Թվով 2 հատ սեմինար դահլիճներ
Համերգային դահլիճի զգեստափոխման սենյակներ թվով 13 հատ
Սպորտային դահլիճի զգեստափոխման սենյակներ թվով 6 հատ
Մարզահամերգային համալիրի աջ և ձախ թևի տակեր
Հաելային դահլիճ
Ադմինիստատիվ հատվածի թվով 4 սենյակ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, 0011, Գ .Հովսեփյանի 26

ՀՎՀՀ՝ 01540062
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 2050022082671001
Գործադիր տնօրեն՝

---------- **Հ. Մովսիսյան**
(ստորագրություն/կնիք)

ԿԱՏԱՐՈՂ
«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0028,
Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1
ՀՎՀՀ՝ 00144572
Բանկ՝ թիվ 1 տարածքային գանձապետական բաժին
Հ/Հ՝ 900018002825
Տնօրեն՝

---------- **Կ. Ղազարյան**
(ստորագրություն/կնիք)